

ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ Ներկայ 1897 թվականի Պոլիտիկոս համար տարեկան 10 ֆրանկ » » վեցամսեայ 5 » Արտասահմանի » տարեկան 12 » » » վեցամսեայ 6 » ԿԱՆՆՈՒԻ ՎՃԱՐՆԵԼԻ	Համակ դրամ երկուսն դրկեղ հեռուստայ հասցեով ԽՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՇՐԱԿՈՒՆԵՐ ՀՐԱԳՐՈՅ ՎԱՌՆԱ (ՊՈՒԼԿԱՐԻԱ) Редакция на Вѣстникъ „Иравункъ“ ВАРНА (България).	Rédaction du journal „Iravounk“ VARNA (Bulgarie)	Խոթագրութեան ուղղեալ գրութիւնք էս չեն դրկուիր եւ յարմար դատարան- ները միայն կը հրատարակուին անբող- քովի կաւ մասաւր: Դաւանդման տոգը 20 սանթիմ. երե- կեկ տեղի անգլաւերու համար 20 0/0 գեղջ կը լինի:
---	---	--	---

ԻՐԱՎՈՒՆԿԻ ՅԱՌԱՋԻԿԱՅ Գ. (1898) ՏԱՐԵՇՐՋԱՆԸ

Իրաւունք Պոլիտիկոս, ինչպէս եւ արտասահմանի խեղճաւ ու յառաջդի-
մասէր հայ տարրին համակրութեամբ շրջապատուած՝ ընդհուպ պիտի բողբէ իր
հրկրորդ տարեշրջանը եւ պիտի թեւակոխէ երրորդին մէջ, ուր մեծայայտ է թէ
միեւնոյն ժողովրդականութիւնը վայելելու բախտաւորութիւնը պիտի ունենայ:

Այս յուսով մտադիր ենք նոր տարեշրջանին սկիզբէն քանի մը բարեփո-
խութիւններ մտցնել խմբագրութեան մէջ, զորս մեր պատուարժան ընթեր-
ցողներուն ուշադրութեան կը յանձնարարենք եւ որոնցմով կը կարծենք պու-
կարահայ մամուլին մէկ պակասը լրացուցած ըլլալ:

Թերթին հայերէն մասին մէջ Արտաքին Լուրեր խորագրին ներքեւ բաժին
մը պիտի յատկացնենք այն քաղաքական եւ այլ կարեւորագոյն լուրերուն որոնք
թէեւ Հայկական կամ առ հասարակ Արեւելեան խնդրոյ հետ սերտ առնչութիւն
չունենան, սակայն ինքնին բաւական չափական եւ մեր ընթերցողներուն հե-
տաքրքրութեան արժանի երեւին:

Իսկ թուրքերէն մասին մէջ պիտի հաղորդենք պուլկարական այն ներքին
լուրերը, որոնք կրնան մասնաւորապէս պուլկարական ընթերցողը շահագրգռել
քաղաքական, առեւտրական եւ ուրիշ տեսակէտով:

Մասնաւոր խմբագրութիւնը պիտի տարուի թրքերէն մասը, որքան հնար է, պարզ
ընդունով խմբագրելու որպէս զի մեր թրքախօս ընթերցողներուն ամէն զատա-
կարգին համար զիրարահասկանալի ըլլայ:

Մեր բուն նպատակը հայ ժողովրդի շահերուն պաշտպանութիւնն է մեր
համեստ ուժին սահմանին մէջ. ամէն արդէն ինքնին կը հետեւի որ մեր տաղ-
նակարգ պարտականութիւնն է ջատագովել ինչ որ մեր ազգ. շահերուն համա-
ձայն կը գտնենք եւ հարուածել ինչ որ անոնց վնասարեւ է:

Իրաւունք ոչ մի կուսակցութեան, ոչ մէկ մասնաւոր շրջանակի հետ կապ
եւ յարաբերութիւն չունենալով, իբր անկախ թերթ՝ ազգին օգտին տեսակէ-
տով միայն կը գիտէ ու կը հետեւի ամէն ինչ:

Հետեւապէս Իրաւունքի ուղղութեան էական պայմաններէն մին է քննադա-
տութիւնը առանց որոյ արդէն այսօրինակ թերթի մը գոյութիւնը գրեթէ ան-
նպատակ կը դառնայ:

Ազգութեամբ յեղափոխութեան համակիր ենք: Բայց միմիայն այն յեղափո-
խութեան որ իրեն նպատակակէտ ընտրած ըլլայ ազգին շահն ու օգուտը անկեղ-
ծապէս եւ գործէ նպատակայարմար միջոցներով ու հասուն շրջանայեցի թեւամբ:

Ինչպէս մինչեւ հիմա, ասկէ ետքն ալ Իրաւունք պիտի ջանայ տարածել
իր սա համոզումը թէ հայ ժողովուրդը պէտք է ամէն միջոց խորհի ձեռք բե-
րելու Ռուսիոյ բարեկարգամտութիւնը եւ հովանաւորութիւնը:

— Իրաւունքի Գ. տարեշրջանի բաժնեգիրն է 12 լէվ պուլկարիոյ եւ 14 ֆր.
արտասահմանի համար:

Ամէն թիւ հրատարակութեան օրը կը դրկուի պուլկարիոյ բաժանորդնե-
րուն, իսկ արտասահմանի բաժանորդներուն շարքով մէկ անգամ, երկու թի-
ւերը միասին: Արտասահմանի այն բաժանորդները որոնք կը փափաղին խրա-
քանչիւր թիւ գտնաւորուի, պարտին մեզ խմբակը իրենց այս փափագը եւ
իբր թղթատարի ծախքի տարբերութիւնն է ֆր. աւելի վճարել:

Տարակոյս չիկայ թէ նոր տարեշրջանի բաժնեգիրին վրայ 2 ֆրանցի յաւե-
լումը ոչ մէկուն անպատեհ չպիտի երեւայ: Երբ անցեալ տարի թերթը շարքով
երկու անգամ սկսանք հրատարակել, առաջ գիրնին վրայ յաւելում ընելու,
յայտարարեցինք որ եթէ գոնէ 100 բաժանորդ չաւելնայ, ահամայ պիտի ստի-
պուինք 2 ֆր. ի բարդում մը ընել: Ոչ միայն 100 բաժանորդ չաւելցաւ, հապա
նաեւ մինչեւ ներկայ տարեշրջանին վերջը առջի գնով շարունակեցինք՝ նիւթա-
կան ծանր գոհողութիւն յանձն առնելով: Այժմ՝ նոր տարեշրջանին համար
այս յաւելումը ընելով հանդերձ՝ Իրաւունք արտասահմանի բոլոր թերթերէն զգա-
լի կերպով աժան է, եւ թերթին գոյութիւնը ապահովելու համար ուրիշ ճար
չկար թէ՛ ոչ միայն այս 2 ֆրանցի յաւելումը:

Յառաջիկայ տարին թերթը կը դրկենք մեր այն բաժանորդներուն որոնք
ներկայ տարեշրջանի բաժնեգիրն ըլլաւ: Եթէ անոնց մէջ կան այնպիսի-
ներ որոնք ալ Իրաւունք ստանալ չեն ուզեր, թող հաճին Գ. տարեշրջանի առ
տաւելն մինչեւ երրորդ թիւը ստանալէ ետքը, թերթը մեզ ետ դարձնել,
պարզապէս յայտարարելով թղթատարական ցրուելին թէ որ մերթն գայն:

ՈՎ ՈՐ ՆՈՐ ՏԱՐԵՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԹԻԻԷՆ ՄԻՆՉԵՒ
ԵՐՐՈՐԴԸ ԿՍՏԱՆԱՅ ՈՒ ԵՑ ԶԻ ԴԱՐՁՈՒՆԵՐ՝ ԲԱԺԱՆՈՐԴ
ԿԸ ՆԿԱՏՈՒԻ:

Խոթագրութիւն

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ

Փ. Պօլիս, 15 Դեկտ.

Այս անգամ ուրախաւիթ լու-
րով մը պիտի սկսիմ թղթակ-
ցութիւնս: Վերջապէս ժամանակին
ոգին հոս ալ թափանցեց. ընտ-
րական դրութեան մէջ նոր եւ կա-
րեւոր փոփոխութիւն մը կատար-
ուեցաւ: Փ. Պօլսի մէջ կային բազ-
մաթիւ հայեր որք թէեւ ընկե-
րային գիրք գրաւած էին եւ ամէն
կերպով գերադանց էին ներկայ
վարչական մարմինները կազմող
անհատներէ, սակայն բնիկ չէին
եւ հետեւապէս արգիլուած էին
ազգային ընտրութեանց մասնակ-
ցիլէ: Տո՛ւր դրամդ, տուր խելքդ,
բայց մի խառնուիր մեր գործե-
րուն — այս էր փ. Պօլսի հայուն
մէկ մասին «հաւատամք»ը: Յայտ-
նի է արգիլեալը՝ ընտրեցին տասն-
երկու քուէներով թաղական խոր-
հուրդներ որք ընտրուած օրէն
ցուցուցին իրենց անկարողութիւ-
նը, ընտրուեցան հոգաբարձուներ
որք անկարող եղան կառավարել
գաղութը: Պաշտօնի անցում մար-
միններ որք անմիջապէս լուծուե-
ցան: Բնիկի եւ օտարի խնդիրը
բերաւ հասցուց ազգային գոր-
ծերը այնպիսի խղճալի դրութեան
մը որ ուրիշ ճար չը մնայ: Վեր-
ջապէս օտար կոչուած հայերը
այսօր հանդիսաւորապէս մասնակ-
ցեցան ազգային գործին պաշտօ-
նապէս:

Դեռ կանուխ է գրել այս փո-
փոխութեան արտագրելիք օգուտ-
ներուն մասին: Բաւական է ըսել
թէ երեսուն հոգիէ բաղկացած
հսկող եւ ընտրող մարմին մը ընտ-
րուեցաւ որոց մէջ կը տեսնուին
հարստութեան, խելքի եւ նկարա-
գիրի տէր բազմաթիւ անձեր:
Տակաւին չենք գիտեր թէ ի՞նչ
պիտի ըլլայ այս մարմինն անունը,
երեսպիսանակա՞ն թէ գաւառա-
կան ժողով — բայց անունը կարե-
ւորութիւն չունի, մեր փափագն
է գործ տեսնել: Փ. Պօլսի ցարգ-
տեսած չէր այսպէս ոգեւորութիւն
ընտրութեանց պահուն: Տասը-
քսան կաղապարուած քուէներու

տեղ՝ երեք հարիւրի մօտ անձեր
փութացեր էին իրենց քուէներով
ցուցունել թէ փ. Պօլսի մէջ ալ
հայ հասարակութիւն մը կար:

Այս նորընտիր մարմինն անմի-
ջական գործը պէտք է ըլլայ դեպ-
քոցը բարեկարգել. պէտք է ընտ-
րէ հոգաբարձութիւն մը որ կա-
րող ըլլայ գաղութը բոլորովին նոր
հիմքեր վրայ դնել, կարելի չէ
շարունակել ներկայ դրութիւնը:
Մեր աչքերու առջեւ կը ներկա-
յանայ արգէն հոգաբարձութեան
յարմար զարգացած անձերու խումբ
մը: Այս անձերու մէջէն պէտք է
ընտրուի հոգաբարձութիւնը: Իսկ
ամբողջ ժողովուրդը օգնելու է ա-
նոնց՝ գաղութը բարեկարգելու ճիգե-
րուն մէջ: Գաղութին սիմին առջեւ
թող գաղթին կուսակցական ոգին,
ազգականութեան խնդիրը եւ այլ
նկատումներ:

Նորընտիր մարմինն երկրորդ
գործը պէտք է ըլլայ անմիջապէս
ընտրել թաղական խորհուրդ մը
որ ազատէ ազգային գործերը
ներկայ բարեկարգական խառնա-
կութենէն: Այս մարմինը պէտք է
ազատէ ազգային կալուածները
պարտքի տեղ ծախուելու վտան-
գէն: Պէտք է հաստատէ հաւասա-
րակշռութիւն մուտքի եւ ելքի: Այ
բաւական է, անկարող ձեռքերու
մէջ ձգելու չէ՝ ազգին նիւթական
մատակարարութիւնը: Թուլու-
թեան եւ մեղկութեան ոգին որ
առօրեայ կէս-թրքացած կեանքէն
անցած էր ազգային պաշտօնական
կեանքին մէջ, պէտք է տեղի տայ
արագ, աշխոյժ, խնայող եւ գործ-
նական նոր կեանքի մը:

Նորընտիր մարմինն երրորդ
գործը պէտք է ըլլայ անմիջապէս
լուծել ներկայ գաղթականներու
մասնախումբերը, բնեւ անոնց
հաշիւները, գանձել տրամադրելի
գրամները եւ նոր Աղքատախնամ
վարչութիւն մը կազմել, որ հոգ
տանի հայ աղքատներուն, գաղ-
թական, Հայաստանցի թէ բնիկ:
Այ գաղթական չը մնայ փ. Պօլսի
մէջ. ամէնքն ալ հաստատուեցան:
Ուրեմն ի՞նչ հարկ շարունակել
խտրութեան այս ոգին եւ պատ-
ճառ տալ հին նախապաշարունակ-

բու արմատացումին : Երեք չորս բանիմաց և աշխատասէր անձերէ բաղկացած Աղքատախնամ վարչութիւն մը կրնայ մեծ օգուտներ արտագրել : Նպատակ բաժնեկու հին, փտած, անհոգ, սխալ գըրութիւնը պէտք է փոխել : Հաւաքուած դրամը պէտք է գործածել իր բուն նպատակին :

Նորընտիր ժողովը անշուշտ ուրիշ գործեր ալ ունի կատարելիք, բայց եթէ կարենայ այս երեք մարմինները ընտրել արժանաւոր անձերէ, իր գործ մեծապէս գիւրացած պիտի ըլլայ : Բայց կըսուի թէ արդէն սկսած է բայքայլումը, թէ բազմաթիւ հրաժարականներ կան, թէ կայ դատակարգ մը որ որոշած է ամէն միջոցներով դիմադրել պարկեշտ, ազատական և կարող անձերու պաշտօնի կոչուելուն, թէ ազատական և գործնական մեթոդներով գործող մարմիններ չեն կրնար ապրիլ այստեղ փոփոխ մէջ ուր կայր կուսակցութեան օգին կը տիրէ անկարողութեան և տգիտութեան քով : Ժամանակը պիտի պարզէ ամէն ինչ : Բայց թող լաւ գիտնան թէ զարգացած դասակարգը պիտի շարունակէ իր կռիւը տգիտութեան և յետադիմութեան դէմ մինչեւ որ մէկիկ մէկիկ գրաւէ անոնց բերդերը և պարզէ հոն իր բանակին ազատութեան և յառաջդիմութեան գրոշակը :

Անհրաժեշտ ապացոյցներ ունինք մեր ձեռք թէ Պուրկազի մէջ մէկ

քանի անգործ հայեր միանալով փորագրել տուած են Հայ Յեղ. Միութեան անունով կնիք մը և փ. Պոլսի մէջ ապրած են ընկալագիրներ և սխալած են գրած հաւաքի կայրարանները : Մեք չենք զարմանար այս երեւումին վրայ, վաճառի շատ տեսանք ասոնց նըմանները : Բայց կը գործառնենք մեր հայաստանցի եղբայրներուն որք տակաւին կը խաբուին : Երեսնորդական հեք որ իրաւաւոր միշտ ջանացած է ճշմարտել խաչագողները իրենց իսկական գոյնիւրատակ : Կղզու շտապներ մեր շրջակայ կայրարաններու հայաստանցի եղբայրները այս խուճիկի շտապտակով ինչո՞ք են որ ամէն ստուրին միջոցներ գործածեց ազգին մէջ պառակտում՝ ձգելու և օտարներու առջիւ ազգային պատիւը որոտուտելու :

...

ՀԱՅԵՐԻ Ի ՈՒՍԼԱ

(Շար. ևս/ս. քիւէն եւ վերջ)

Այս տեղ անցողակի յիշենք որ Շուվալի կինն ալ, ինչպէս ամէն բաւ մէջ՝ նոյնպէս և այս անգամ ունեցաւ իւր գերն : Տեղացի տիկնանց բարեգործական ընկերութիւնը ստանձնեց անգղիացեաց հաշուին բացուած մեր արհեստանոցի հսկողութիւնը, և նորա ժրջան անգամահինի շնորհիւ էր որ բազմաթիւ գաղթական չքա-

ւոր կիներ և աղջիկներ ամիսնեայով իրենց ապրուստը պատուաւոր կերպիւ՝ նոյն իսկ իրենց ձեռքի աշխատութիւնով շահելու բախտաւորութիւն ունեցան :

Նկատեցէք այդ յալորի հետ՝ Շուվալի հայութեան նիւթակաւորութեան աննախնայ վիճակը և պիտի համոզուիք թէ Պուրկազի գաղթականներ ուրիշ տեղ չեն գտած այն եղբայրական գութն ու հիւրասիրութիւնը որ տեսնուեցաւ Շուվալի հայուն վրայ :

Եթէ Շուվալի գաղթականաց յանձնաժողովը ստիպուած էր մի քիչ հանգչիլ ծանր աշխատանքներէ հեք, այդ հոռեղի պակասութենէն չէր, ինչպէս կերեւաւայէ Պ. Հրանտ վահէ : Երբ անցեալ տարի Նոյ. ամսոյ մէջ Միս Ֆրայզերներ, Սըր Արթուրներ իրենց գրպաններ անգղիական ոսկիով լի՝ իկան նպաստել գաղթականաց, բնական էր և նոյն իսկ գաղթականաց շահը կը պահանջէր որ ասպարէզը մնայ քրտակը պարարտ անգղիացիներու : Անոնց նպաստը վերջացաւ և ճիշդ ժամանակին հասաւ կարօտախնամ Ամիրխանեանց մը. երբ սա ալ մօտ 4 ամիս շարունակ Շուվալի գաղթականներու ամէն պիտոյից կարելի եղածին չափ բաւարարութիւն տալէ վերջ, գաղթեցուց իւր օգնութիւններ, յանձնաժողովը կրկին իւր պաշտօնի գլուխն անցաւ մեղմելու համար գաղթականներէ ամենէն չքաւորների զմեզակ կացութիւնը, ի

հարկէ իւր նիւթական ոյժերի համեմատութեամբ :

Ճշմարտութիւնը մի քիչ յարգեցէ՛ք, Պ. յօդուածագիր, և դուք ալ մեկ հետ խոստովանեցէ՛ք թէ մի անխիղճ զրպարտութիւն է ձեր գրածը : Դուք կըսէք «նախկին աղքատախնամի, (պէտք է հասկնալ յանձնաժողովի), անգամներ քանակով գաղթականներու այդ խմբակին մտադրութիւնը՝ գանազան միջոցներու կը դիմեն» (ի՞նչ ընելու համար—զօրութեամբ կը հասկցուի—նոր կազմուելիք մի ընկերութիւն արգելելու համար), մինչդեռ յանձնաժողովի անգամներ բոլորովին հակառակ կը մտածեն և կը գործեն, քաջաբերով անոնց ձեռնարկը, շանալով անոնց նոր նուիրատուներ գտնել և պատրաստականութիւն յայտնելով ամէն տեսակ օգնութիւն և միջնա իսկ պատրաստ գումար մը յանձնել իրենց :

Սակայն շատ ծիծաղելի կը դառնաք երբ կը կարծէք թէ նուրեկ գաղթականների մէջ կազմուած մի ընկերութիւն իրաւունք ունէր թաղ խորհուրդէն օրինաւորապէս կարգուած մի յանձնաժողովէն պաշտօնապէս հաշիւ պահանջելու յաւակնիլ և թէ այդ ընկերութիւնը պարտ էր մերժել յանձնաժողովին գրամական նպատակը : Որքան անխմաստ այնքան մեծամիտ յաւակնութիւն :

Ինչպէս ամէն բան, նոյնպէս և ստախոսութիւնը պէտք է ունե-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ (3)

ԱՐԵՎԵԼԵԱՆ ԽԵՂԻՐ

Պաղատաւի մէջ խալիֆայութիւնը Արքայանոց ձեռքն էր : Պարկաստանի ներքին երկպառակութիւններէն օգտուելով, Թուրքերը սկսան յառաջանալ մինչեւ Պաղատաւ և մտնել Միս-լիմաններու ծառայութեանը մէջ : Այն Թուրքերը որ իրենց երկրին մէջ իսլամութեան հակառակորդներ էին, հոն ամենայն յօժարութեամբ կը հպատակէին իսլամութեան կրօնական ծէսերուն, թէեւ անոնք բոլորովին անհասկանալի էին իրենց կրօնական իրերու մեկնութիւն, աստուածաբանութիւն չկար իրենց համար : Իսլամական պատուէրները կընդունէին իւր մէջմէկ զինուորական հրաման : Նոքա Միւսլիման էին լոկ արտաքին երեւոյթով : Այս Թուրք վարձկան զինուորները՝ խալիֆաներուն կամ Միւսլիման իմամներուն երդում տալով պարտ անձին կը համարէին ընդունել նաեւ նոցա կրօնական դաւանանքը և միանգամ ընդ միշտ իսլամացած, կրօնքի մասին վիճաբանել իսկ անտեղի կը համարէին :

Պալիֆաներու քաղաքականութիւնն էր այդ արկածախնդիրները յղել դէպի հիւսիս, արեւմուտք և անոնցմով տիրապետել երկրներու որչափ որ կարող էին : Այս միջոցաւ անոնք կարողացան ձեռք բերել հիւսիսային Աստրիքի և Փոքր-Ասիայի մէջ բազմաթիւ

կղզիացած բերդեր և իշխանութիւններ : Քրիստոնեաներէ յափշտակուած իւրաքանչիւր հողի համար խալիֆաներէն առանձին տնտեսներով կը պահուէին : Նոքա իսլամութեան մի տեսակ յառաջամարտիկներն, ասպետներն էին ընդդէմ քրիստոնեական :

Թ. դարէն սկսեալ, տեսակ մը իսլամականներն եղան իսլամութեան, Քրիստոնեականութեան հանդէպ : Այս արկածախնդիր ասպետներու թաց թողած տեղը իրենց նորեկ ցեղակիցներով կը լցուէին, որոնց գլխը այնքան թեթեւ էր, որքան իրենց թաղիքը, բայց այնքան լի յոյսերով և յանգստութեամբ, որքան իրենց նախորդները : Վայրկեան մը այնպէս կարծուեցաւ թէ Թուրքաստանը բազմախնդիր մուրացկաններու անսպասելի աղբիւր մըն է : Արքայանոց յաղթութիւնէն յետոյ անձրեւի պէս կը թափէին Թուրքերը : Ամառնալի որոնողներու, հողի և ժառանգութեան ցանկացողներու-թիւը անհամար էր : Երբ այդ մուրացկան հերոսներու խումբերէն մէկը կը յաջողէր մի տեւ երկրի մէջ հաստատուիլ, առաջին գործը կը լինէր երկրի գիւնդարական ոյժը ձեռք ձգել, և փոքրիկ առիթ մը ներկայանալուն պէս երկրին տէր դառնալ, արտաքսելով բուն աշխու և անոր ինչքերը իրեն սեփականելով :

Թ. դարուն երբ Սելճուքեան կայսրութիւնը քայքայուեցաւ, Փոքր-Ասիոյ մէջ տասն ամիսալութիւններ կամ խանութիւններ կազմուեցան : Այդ ամիսալութիւններէն մէկը՝ տասներորդը,

աւելի մեր ուշադրութեան արժանի պիտի լինի : որովհետեւ հոն կաղմուեցաւ այն ժողովուրդը, որ իր անունը փոխ առնելով իր պետերէն մէկէն, տուաւ նաեւ Անաթոլի և Պալքանեան թերակղզիներուն : Ընդ մի բան այնքան խոնարհ և ախարս, հուսատէր եղած, որքան այս աղբիւրի յղմաւորութիւնը : Իր հետեւոր նախահայրերէն մին՝ Սիւլէյմանը ձգել հեռացել էր Սորասանէն 150 հազար գաղթականներով և հաստատուած էր Երզնկայի և Ախալթի մօտերը : Մոզորների ասպատակութիւններէն նեղուած անոնք յիստ ընկրկնեցան : Սիւլէյմանի մահէն յետոյ, այդ մի ընտանիք կազմող վաչկատունները ցրուեցան և նոյն իսկ չորս որդիները (Սիւլէյմանի) իրարմէ բաժնուեցան : Անոնցմէ երկուքը իրենց հայրենիքը Սորասան դարձան իսկ միւս երկուքը, Տիւն-Դար և Էրթոզը (հերձոց) չորս հարիւր ընտանիքով հաստատուեցան Էրթոզի արեւմտեան կողմը : Այս տեղէն հեռանալէ սկսնդին դէպի արեւմուտք չուել, որպէս զի Սելճուքեանց Սուլթանի հովանաւորութիւնը վայել Սելճուքեաներուն տուած օգնութեան համար ստացաւ Դուրանիչ և Էրմէնի լեռները իւր ամառնային բնակութեան տեղ, և Սէօկիթ դաշտը ձմեռանոցի համար : Էրթոզուրի օրով արտաքայ կարգի բան մը չպատահեցաւ, բայց ինչորբ քոլորովին կերպարանափոխ եղաւ, երբ Էրթոզուրին յաջորդեց Օսմանը (սրունք բեկանող), որուն

անունովը և ժողովուրդը կոչուեցաւ Օսմանը կամ Օթոման : Օսմանի օրով այդ փոքրիկ ժողովուրդը իսլամութիւնն ընդունեց : Անաթոլիան կըսէ թէ Օսման յաճախ այցելելու կերթար գիտնական և բարեպաշտ Եէյի Էսկալիին, որ կը բնակէր իսլամական գիւղին մէջ : Օսմանը սիրահարեցաւ անոր Մալ-Սաթիւն աղջկանը և հետեւեալ երազը տեսաւ օր մը երբ կը քնանար իր ապագայ և երջմանը մէջ : Եէյի-Էսկալիին ծոցէն դուրս ելաւ լուսնեակ մը, որ արագորէն մեծնալով լրիւ լուսն դարձաւ և եկաւ իր իրանաց մէջ հանգչեցաւ : Այն ժամանակ իր ծոցէն վեր բարձրացաւ հսկայական ծառ մը, որուն ճիւղերն, իրենց ստուերներով ծածկեցին երկիրները և ծովերը, գմբէթները և կոթողները, յաղթական սիւներն և բուրգերը : Այդ ծառի արմատներէն կը հոսէին ծիւղիս, Եփրատ, Նեղոս և Դանուբ : Ծիւղերուն չուքը կը տարածուէր բարձրագագաթ լեռներու վրայ որոնք էին Կովկաս, Պալքան, Տորոս, Աղլաս : Յանկարծ բուռն քամի մը բարձրացաւ, տերևներու ծայրերը սուրի բերանի մը պէս դէպի կէտ մը ուղղուեցան, այդ կէտը քաղաք մըն էր, որ կը գտնուէր երկու ծովերու նւերկու ցամաքներու միացած մէկ տեղը և կերեւէր օդակի մը պէս երկու գմբէթաւ : Երկու շափուղայով դարձաւ ծառ : Օսման կը պատրաստուէր այդ մատանին մատն անցնել՝ երբ արթնացաւ :

(Շարունակելի)

նայ իրեն սահմանը. դուք այն
ալ կանցնիք և նախկին ընկերու-
թեան՝ կառավարութեան մօտ
վարկի ստորնացման խօսքեր կը-
նէք, բան մը որ մեզ համար բո-
լորովին անհասկանալի է, զի չենք
կրնար ըմբռնել թէ յանձնաժողովի
անգամք ինչով արժանացած են
այդ ստորնացումի, արգելք իրենց
զուտ հայրենասիրական, մարդա-
սիրական զոհաբերութիւններով:

Չենք ուզեր աւելի երկարել:
Մամուլն աւելի լուրջ և օգտա-
կար բաներով պէտք է զբաղի:
Մենք սկզբունքով կը յարգենք
հրապարակային ըննադատութիւնը
բայց ճշմարտութեան վրայ հիմ-
նուած ըլլալու է ան: Միայն կու-
զենք մի օգտակար խրատ տալ
ձեզ. եթէ չէք գիտեր գրել, գո-
նէ լռել գիտցէք և ձեր այդ վի-
ճակին մէջ մի յաւակնիք ուրիշ
անգամ գրական հրապարակի
վրայ երեւիլ:

ՏԻՕՆԱՔՅ (')

ՀԱՅԿ. ԵՐԵՎԱՆԻ Ի ԲԵՐԵՆՍՈՎՈՒՄԻ

Դեկտ. 5 ին Բեթերայուրի
«ազնուականներու ժողովարանին»
մէջ տեղի ունեցեր է այն հայկա-
կան երեկոյթը, որուն հասոյթը
ամէն տարի կը յատկացուի տանի
շափ չքաւոր հայ ուսանողներու
գնաստիարակութեանը: Երեկոյթը
իսկապէս նուագահանգէս մըն էր,
ուր հայ օրհորդներ ու երիտա-
սարգներ երգեր են հայկական
յոյժ գեղեցիկ ու հայրենաշունչ
երգեր: Տաղանդաւոր ջութակա-
հար Պ. Նարպանտեանը իր ջլմայ-
լելի արուեստով հիմնուած պատճա-
ռեր է: «Արաքսի արտասուքը»,
«Մեր հայրենիք», «Ձէլթունցոց
մարշը» թնդացեր են հոն: Հայեր
ու վրացիներ իրենց ազգային պա-
րերը պարեր են:

Երեկոյթը կազմակերպողն և
ղած է փոխ-գնդապետ Պ. Սուլ-
թան-Շահ, իսկ կարգադրիչներն
եղած են հայ ուսանողներ և ու-
սանդուհներ:

ԹԱՏՐՈՆ Ի ՎԱՌՆԱ

Իննամսեայ բացակայութենէ մը
յետոյ, Պապահան-Պէնլեան թա-
տերախումբը անցնալ շաբթու վե-
րադարձաւ վառնա և արդէն իսկ
կերակի գիշեր իր առաջին ներկա-
յացումը տուաւ Սուրբ Թատե-
րասրահին մէջ: Բեմական այս
հայ խումբ որ Պուլկարիոյ մէջ
միակն է որ կը գործէ անընդհատ

(') Այս գրութեան առաջին մասին
ներքեւ որ հրատարակուած էր նա-
խորդ թուով, սխալմամբ եռասու
գրուած էր վերագրուալ ստորագրու-
թեան տեղ, ինչպէս նաեւ մոռցուած
էր շարունակելի նշանակել:

ու գերասան՝ երու վրայ շատ հա-
զուագէպ երեւցած համերաշխու-
թեամբ մը, արդէն շահած հա-
սարակութեան համակրութիւնը,
մեծապէս կը կարօտի սակայն
նիւթական ու բարոյական քաջա-
լիրանքի: Թատրոնը պէտք մըն է
ու այս պէտքին գոհացման հա-
մար պուլկարաշայը չի կրնար
ասկէջ լաւ տարրերով կազմուած
խումբ մը ունենալ: Հետեւաբար
զայն ապրիցենելու է, որպէսզի ա-
նոր գոյութիւնն ապահովուի:
Հայ թատերախումբն անշուշտ չեն
մոռցուիր «վէսէլ» իրերը քոչուարին
մէջ:

Սիսական ընկերութեան առ-
ժամեայ գործ. ժողովը հրատարա-
կութեան համար զրկած է մեզ հե-
տեւալ հաշուեկշիռը, զոր իրեն
ներկայացուցած է հրաժարեալ
վարչութիւնը:

ՀԱՇՈՒԵԿԵՒՈՒ
ՍԻՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ՎԱՌՆԱՅԻ

93 Մարտ 15էն մինչեւ 97 Յունիս

1893 էն մինչեւ 1896 Մայիս	ՊՈՒՏՔ	Ֆր. սն.
Գննիչ յանձնաժողովի հաշ- ուեկշիռն համեմատ մուտք	2433.85	
«Համբերութիւն» ներկա- յացման ժամանակ ծախ- ուած տոմսակ	269.—	
Արշակ Բ. ներկայացման ժամանակ ծախուած տոմսակ	405.60	
«Նոր Մակտաղենացի» ներ- կայացման ժամանակ ծախուած տոմսակ	331.—	
Գումար	3440.45	

ԵԼՔ	Ֆր. սն.
Գննիչ յանձնաժողովի հաշ- ուեկշիռն համեմատ ծախք	889.35
«Համբերութիւն» ներկա- յացման համար ծախք	281.—
Արշակ Բ. ներկայացման համար ծախք	86.30
«Նոր Մակտաղենացի» ներ- կայացման համար ծախք	330.—
Չը ցրուած բաժնեգրներ	34.90
Այլ և այլ ծախք	47.40
Հրկիզեալ գարոցի մէջ հա- տատուած ընթերցարանի	87.50
Տէրուեան վարդապետի յուզարկաւորութեան առ- թիւ ընկերութեան կող- մէ նուիրուած մէկ պը- սակի	20.—

Գումար	4773.45
Դանձուելիք դրամ	637.—
Պուլկարական Տրուժպալ ըն- կերութեան քով գտնը- ւած դրամ 1000 ֆրանք	1030.—
Սակի դրամ	3440.45

1896 Մայիսէն մինչեւ 97 Յունիս	ՊՈՒՏՔ	Ֆր. սն.
Գննիչ յանձնաժողովի հաշ- ման հաշիւ ընկե- րութեանն առնուած տո- կոս 4 0/0 77 ֆրանք սակի դրամ կամ	84.70	
«Գալլ վահան» ներկայաց- ման ծախուած տոմսակ	447.70	
Բաժնեգրներէ գոյացած	16.50	
Թատերական հագուստնե- րէ առնուած վարձք	60.40	
Աղքատախնամ ընկերութե- նէն փոխան մէկ «Արաքս» հանգէսի	45.—	
Գումար	1681.30	

ԵԼՔ	Ֆր. սն.
Վարձք ընթերցարանի 15 ամսոյ համար	295.25
Ընթերցարանի տախտակ ներկ և այլն	114.80
Ընդհ. ժողովոյ առնեալ պետ Սիսակ Մարգար- եանի տուած	18.40
Լրագիրներու բաժանորդա- գրութիւններու	222.30
«Գալլ վահան» ներկայաց- ման եղած ծախք	167.60
Հակող պաշտօնեայներու վը- ճարուած	254.—
Կահ կարասի և ծախք ըն- թերցարանի	557.90
Եւ տրուած բաժնեգրներե- րէ զեղչ	2.—

Գումար	1632.25
Գանձուելիք	49.05
	1681.30

Իսկականին վրայ ստորագրած են
Ատենապետ Ատենադպիր
Փ. Հալսանեան Յ. Մ. Սարգիսեան
Վ. Համարակալի
Մ. Զոգոնեան
Ներկայոյ հրատարակութեան
տալով կը խնդրենք որ եթէ մէկը
ո կ է գիտողութիւն մը և կամ ա-
ռարկութիւն մը ունի թող հոճի
մեզ իմացնել մինչեւ մէկ ամիս:
Պատրաստ ենք փափուքողին բա-
նալ հաշուեկշիռիս մանրամասնու-
թեանց տոմարները:

Ի գիմաց առժ. գործ. ժողովոյ
Ատենապետ Ատենադպիր
Շ. Յ. Սուրխալեան Վ. Մանուկեան

«ԻՐԱՒՈՒՆՔ»Ի ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Քէօթէ՛ճէ ինչպէս նաեւ ուրիշ
տեղերու մեր բաժանորդներէն կը
խնդրուի թէ որոնց որ հասցէնին
սխալ կամ անբաւական ըլլալով թեր-
թերը ժամանակին չեն հասնիր՝ իմա-
ցնեն մեզ իրենց ուղիղ հասցէ՝ երբ:
— Տիար Թ. Թէրզեան Քէօթէ՛ճէ: —
Ձեր առաջ խրկած գրամներն ևւ այս
անգամ 20 ֆրանքը ստացանք:
— Տ. Յ. Սօֆիա. — Հայկական սըր-
ճարներ անցեալ տարուան համար վճա-
րած է 4 ֆրանք: 1897ի համար կը
պարտի 10 ֆրանք:
— Տիար Ի. Ա. Տօմրիշ. — Մէք-

թուպուրը պարբ. զաթընդա էգ-
նէր ճիշէթ Էմինյէթի քաւորէթի վար
տըր. մէջուլիէթինիդ սէպէպիլէ ապո-
նըմանլարը թահսիլ իտէմէթիլինիդ ի-
չիւն իշի բօսթայա հէվալէ իթմիշիդ:
Աօն տէֆա կէօնտէրտիլինիդ ազճէի
քիմէրտէն ալմըշ օլտըղընըզը պիլտի-
րինիդ: Տիար Յովհաննէս Տավուտա-
նըն ևալընըզ պու սէնէ իչիւն 10
ֆրանք պօրճը վար արը:

ԱՂՔԱՏԱՐԱՄ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Վառնա Աղքատախնամ ընկե-
րութիւնըն 1-2 այտան պէրու
հայաթ ու մէմաթ պէյնինտէ
միւշէվիլէ պիր հալ քէսպ իթմիշ
օլտըղընը թէսիւֆէն կէօրմէքտէ-
յիլ. տիկէր թարափտան հալա-
լարըն թէպէտտիլի սէպէպի իլէ
խասթալար բէք չօղալմըշ օլուպ,
հէր կիւն հէր սաաթ իչիւն 3-5
էրքէք վէ գատըն Աղքատախնա-
մըն իտարէխանէսի էօնիւնտէ
սաաթլարճա պէքէմէքէ, կէլիպ
կիտէնէ հալլէրինի թաղարիւէն
իֆատէ իթտիքտէն սօնրա՝ էլլէրի
պօշ կէօղլէրի ևաշ օլտարազ կէրի
տէօնմէկէ մէճպուր օլիյօրլար:

Աղքատախնամըն գործադիր
ժողովը շու սօն ալլարտա ընկե-
րութիւնըն հասըլաթը բէք ազ
օլտըղընը վէ բաժանորդլարըն իյ-
ֆաիտէյն իթմէտիքլէրինի սէպէպ
կէօսթէրէքէ, օլ սէֆիլլէրին
10 տա 8 ի պօշ չէվիլմէքաէ տիր:
Ֆազաթ պիլմէյիլ քի Գործադիր
էֆէնտիլէր հազըզաթէն բաժա-
նորդլարա միւրաճաաթ իտուպտէ
մի բարա ալամալըլա՝րա. եօքսէ
քէնտիլէրի մի իշտէն պըզմըշ օ-
լուպ, վազիֆէլէրինի իյֆա իթ-
մէյօրլար:

Պիզճէ շու իքինճի սիւալըն
թատաիգի տահա տօղրու կէօրիւ-
նիյօր. զիրա էվիլէքի կիւն պիր
խասթա իչիւն օլընան միւրաճա-
աթա Գործադիր ալալարը շու
ճէվապը վէրմիշլէր տիր:

Պէն գալըշմամ Միւսիւ Ս. է
կիթ. Միւսիւ Ս. տախի՝ պէն
գալըշմայօրըմ Պարոն Գ. է կիթ,
նիհայէթ սէֆիլ խասթա՝ պիր
գահվէտէն՝ պիր տիւքեանէ, օ-
րատան օլ պիր զաթա, կէզիպ
տօլաշտըգտան սօնրա պօշ էլ իլէ
կէրի տէօնմէկէ մէճպուր օլմուշ
վէ պու սէպէպտէն իւչիւնճի պիր
շախս թարաֆընտան գահվիհանէ-
տէ պիրարպէտա տախի զուհուր
իթմիշ իտի:

Գործադիրլէրին «Պէն գալըշ-
մամ» տէմէլէրի մուճիպի թաա-
ճուպ վէ թէսիւֆ տիր:

Պու տէֆա պու խուսուս հագ-
զընտա թաֆսիլաթա կիրմէք իս-
թէմէյիլ, զիրա ևաղընէն թէ-
ճէմիւ օլընաճազ ընդհանուր ժո-
ղովտա պու եօլտա պալը թագ-
սիրաթըն էօնիւնիւ ալմայա չա-
լըլըլաճաղը շիւքհէսիլ տիր:

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Սօֆիատա մեծիսի մեպուսանըն գաբուտըմասը մինասիպեթի իւէ ֆէխամէթի Բրէնս ֆէրտինանտ հազրէթէրինին իրատ իթտիկի նութզըն սուրէթի տիր:

«Միլլէթ մեպուսը էֆէնտիէր. Տօգուզընը մեծիսի միլլինին իշպու ինթիմանտա տախի իպրազ իթտիկինիզ հաիդի մէտէնիյէթ վէ մէնֆաթ ֆիալիյէթ ինիզտէն տօլայը սիզէ պէյանը լեշէքքիւրաթը սէմիմիյէտէ պուլունտըլըմը վազիֆէ ատտ իտէրիմ:

Մէպուս էֆէնտիէր. Իտարէի հիւքիւմէթին միւլթէլիֆ տայիրէլէրինէ ալիտ օլուպ, դարարկիր վէ գապուլ օլմասը սիզէ հէվալէ օլունան նիզամնամէ լայիհէլէրի իւէ գարաըլարըն միւլաքէրէ վէ լեշտըզաթընտա իպրազ էլլէտիկինիզ մէհարէթ վէ սայու զայրէթ հէյէթի մէպուսանըն հըսսիյաթը վաթանքէրվէլիկինէ վէ Պուլկար միլլէթէրի իւէ իհիթիյաթը վաթանըն սիզէ հէվալէ իտիլտիկի խուսուսաթ հազգընտա հէր ճիհէթ վուգուֆը լեթամէ հասըլ իթմիշ օլաըլընըզ Պէնիմ նազարըմտա գըլմէթի պիր պիւրհան տըր:

Մէպուս էֆէնտիէր. Էմնիյէթ ինիզլէ լեթալիյէ էլլէտիկինիզ հիւքիւմէթիմ պու էմնիյէթ սայէսինտէ մէմալիքէ պէօլիւք մէնֆաթլար աշմըլ վէ լեթալէ էլլէտիկի ամալըն վիճուտէլը օլմասընա քէմալը կէրմի վէ տիրայէթի սուրէթլէ պունտան պէօլլէ տախի լեթալիպ վէ տէվամ իտէճէլինէ էմնիմ:

Թարաֆընըզտան իպրազ օլունան սայ ու զայրէթէ պէ լեթքրար լեշէքքիւր վէ ալիլէրինիզ սէգտինէ պալթիւնարանէ ալտէթի նիզի արզու իտէրէք, տօգուզընը մեծիսի միլլինին իքինճի ինթիմանըն խիթամ պուլտըլընը իւլան իտէրիմ:

Ֆէրհան

ԿԻՐԻՏ

Պու հաֆթա էվրուա ճերիտէ. լէրինտէ օգուլտըլընա նազարէն Բուսիա՝ կիրիտէ վալի օլմազ իւզրէ, Բրէնս Եօրկիսը լեթէթի իտէճէք իմիշ, ֆազաթ տիկէր տէվլէթլէր Բրէնս Եօրկիսին լեթալի նինէ գարըլ կէլէճէքլէր տէնիլիյօր իտի: Պու մէսէլէնին տահա պու տէրէճէ միւլէվիլէլ պիր հալտէ պուլընտըլը խիլաֆընա օլտրազ, Աթալն Բուլէլին Սթանպուլտան 18 թարիլի վէրմիշ օլաըլը պիր լեթէլըաֆ պէր վէճհի ալթի պիւտիրմիշ տիր:

«Պապը Ալի՝ Բուսիա, Ֆրանսա վէ ինիլլիթէրա էլլիլէրինէ ճէվապ վէրիպ, Էրիթ իշիւն Բրէնս Մալ:

րօգօրտաթմօնըն վալի լեթալի օլընմազ լեթէլիֆի Պապը Ալիտէն գապուլ օլընմըլ օլաըլընը պիւտիրտի: իշպու հալտաիս էլան տիկէր մէնպալարտա՝ լեթասիգ օլընմալըլ տըր:

—Թարմըլըն վիէննա մուլպիւրի պիւտիրմիշ տիր քի, ալիլէրէն կիրիտէ իսլամլար լեթաֆընտան վուգուլա կէլէն իսթիլալ սէրայընէ լեթրիգալարը սէսէրէսի օլաըլընտան՝ էլլիլէր պու խուսուսա Պապը Ալիյէ շէտիտ նօթալար վէրէճէքլէր իմիշ:

ՄԻԻԹԵՆԵՎԻԵ

Աթալն Հաշալըն 18 թարիլի Սթանպուլտան պիւտիրտիկինէ պիւնան՝ բօլիլէրին վէրմիշ օլաըլը մալիլմաթա նազարէն, շու սօն կիւլէրտէ Էրմէնի իսթիլալը գօմիթէսինէ մէնսուպ 40 քիշի էճնէպի բասարօրլարը իւէ Սթանպուլա կիրմիշէր իմիշ: Բօլիլէրին նէլը իթտիկի պու մալիլմաթ սիւլէթլէտարիք օլուպ, պու պէհանէ իւէ լեթքրար Էրմէլէրէ խանէլէրի Բօլլամազ, վէ պիւլ չօգ պի կիւնահարը լեթվգըթ իթմէք վէ պու վասիթա իւէ ալիլիյէ վէ պապը զապլիյէ մէմուլարընա պիր լեթարէթ Բուլաշմազ մազսէտիլինէ մէպնի օլաըլը աշիքնար տըր:

Սթանպուլ լեթէլըաֆընա նազարէն, Գօշանտան (Մաքէտունիա) պիր մուհիմ սիւհա տէրօսը պուլունմըլ, վէ մէլքիւր տէրօտան քիւլլիլէթի ֆիշէնիլէր վէ տինա միթ էլտէ իտիլմիշ տիր:

Եունան հիւքիւմէթի Մալրօգօրտաթմօնըն վալըթասը իւէ լեթք հիւքիւմէթինէ լեթէլիֆ իթմիշ տիրքի, լեթալիլնաթը հարպիլիյէն պիր մըգտարը օսմանը պանքասընտան էօտէնսին վէ պուլնա մուգապիլ լեթիւքլէր թէսալիանըն պիր գըսմընը՝ Բանի Լամիա ճիլարարընը լեթք իթսինլէր: Պու լեթէլիֆէ ճէվապէն՝ Պապը Ալի էլլիլէրին ընյի ալմազսըլըն հիշ պիր մուամէլտէ պուլընմալաճաղընը վէ պու պապտէ էլլիլէրին ընյինէ մուրահաթ օլընտըլընը պիւտիրմիշ տիր:

Սրանուարտըն Սթանպուլ լեթք տալիլէրինտէն ալտըլը մալիլմաթա կէօրէ, պու հաֆթա ըՍթանպուլ վիւքէլասը տէկիլիլէճէք վէ խալիլ Բիֆաթ բաշանըն Բէրինէ Մահմուտ շէլալէթտին բաշա Սատըրազամ լեթալի օլընաճազ ըմըլ:

Թօգալտան ալընան մէթընպլէր մէլքիւր շէհրիտէ վէ ճիլար գասապալարընտա ալալիշ պէր:

քէմալ օլաըլընը վէ ալալ ու իթալարըն սուրէթի միւնթալալալտէ ճէրեսին իթմէքտէ պուլընտըլընը վէ հալ պէօլլէ տէվամ իտէր իսէպիր գաշ սէնէ վարֆընտա միւլէլալարը օլան միլլէթալարըլըլ էլվիլէքի կիպի գուվիլէի մալիլիէ հայիզ օլապիլէճէքլէրինի պիւտիրիյօլար:

Մուհարէպէյէ տախիլ օլուպտէ պիւլալիլէ ալտէթ իթմիշ օլան Էունան լեթալալարը Պուլկարիալազապուլ օլընմըլ օլաըլըլըլ իշիւն Եունան հիւքիւմէթի լեթէլիլարալ լեթըն պէյան իթմիշ տիր:

Եունանիսթանտա պուլունան լեթք էսիրէրին սօն ֆըզրասը 14 քիշիտէն իպարէթ օլարազ Սթանպուլ կէլմիշ տիր:

ՀՐԱԽԷՐ

Տիգույա Ալքատալանամ Ընկերուլի Բան գոլլէթիւնը աւելի արգիւնտըր ընելու նպատակաւ, ընդհանուր ժողովոյ գիւնա կը հրաւիրէ սոյն ընկերուլի Բան բաժանորդները ներկայ գտնուիլ ընդհ. ժողովի գումարման, որ տեղի պիտի ունենայ յառաջիկայ կիրակի, կէս օրէն Ետք ժամ 4ին, ընթերցարանի սրահին մէջ:

Դիւան Ընդհ. Ժողովոյ Ասեմապէս Ասեմադպիր Յ. ԳՈՒՐԴԵԹԵԱՆ Մ. Գ. ԱՇՃԵԱՆ

ԶԱՍԻՐԻ ԲԻԱՅԱՍԸ

Վառնա 24 Դեկտեմբեր
Պուլտայ
Վալիօն, լիպրա 47-51, հէթթօլ. 8.60-9.20 ֆրանք
Արապա, լիպրա 47-55 հէթթօլ. 8-10.60 ֆրանք
Արապա
Լիպրա 38-41, հէթթօլ. 4-4 50 ֆրանք
Միւրըն
Վալիօն, լիպրա 57-58 հէթթօլ. 5.50-5.70 ֆրանք
Արապա, լիպրա 57-61 հէթթօլ. 5.80-6 ֆրանք
Յաւուրիւա
100 օգգասը 17-21 ֆրանք՝ մալա կէօրէ
Նաբօլէն 20.80 ֆռ. հիւսալը իւէ Եօրթուլար սէպէպի իւէ մալինմէքտէ տիր:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՎԱՐԴՈ

ԵՐԵՎԱՆԻ ՍԵՐ
Վիպակ Հայ Յեղափոխական կեանքին
ԳԻՆ 1 ՅՐԱՆԻՔ
ԿԸ ՅԱՆՈՒԻ, Վառնա Իրաւունքի խմբագրատուն, Ֆիլիպէ Անտօն Գօշի ըմլ, Ռուսոնգ էֆէ Խօրաանճանի սրճարանը:

ԱԶԴ

Կը խնդրեմ՝ այն ազգայիններէն որոնք մինչեւ հիմա իմ անունով նամակներ չըրկիլ իրենց ծանօթեալուն կամ ազգականներուն յանձնուելու համար, այսուհետեւ ուրիշ միջոցաւ զրկին իրենց նամակները, սրովհետեւ այժմ՝ դիւրութիւն չունիմ այդ ծառայութիւնը շարունակելու:

Սրճարանապետ Է. Բ. Մ. Խօրաանճան Բուսիա

ՆՈՐ ԵՐԳԱՐԱՆ ԿԱՄ ՄՐՄՈՒՆԶ ՀԱՅԿԱԿԱՆ

Սոյն Երգարանը որ կը բաղկանայ առաւել քան 100 երեսէ, կը պարունակէ շատ մը հին և նոր ազատ երգեր, զորս այժմ ժողովորդն ախորժանօք կ'երգէ:

Փափաքողք կրնան ստանալ զոյն՝ փոխարէնը 1 ֆրանգի նախակազմով (բօսաի բուլ) իրկիլով իմբագրութեանս, կամ՝ գիւնթով հետեւեալ հասցէներուն:

Տեարք
Արիս Գուրպէթ. Ռուսոնգ
Կարապետ Ռուսոնգ Սիլիստրէ
Ալէքս. Տէմիրճիպլ. Ֆիլիպէ
Իսկէնտէր Արալանեան Տօպրիշ
Յովհաննէս Պիպէնեան Պուլկարէ
Արթ. Տէր Ղեւոնդ քնյ. Կալայ
Թէօֆիլ Թէրզեան Դէօտէնէ
Ա. Կիւլէլ Երիքոսիա
Գարեգին Պաշաւունի Գահրիլ

Ալգ. վարժարանաց համար՝ երբ գէթ 10 հատ կ'ուզուի, 20 առ 100 զեզլ կը լինի:

ՏՊԱՐԱՆ ԽՐԱՌՈՒՆԸ, ԼՐԱՆՈՅ

Հրագրիս վերջին երեսի սիւնակներուն մէջ օտար լեզուներով ալ ազգեր կը գետնուին: Առանձին կը ապագրուին գրքեր, տետրակներ ու կը պատրաստուին հայերէն, պուլկարիէն, ֆրանսերէն և յունարէն լեզուներով ընկալագրեր, հասցէներ, հարսանեաց և այլ հրաւիրագրեր, այցեքարտ և այլն:

Գրեթէ 20 ֆրանկ
Փափաքողք պարտին գիւնթ խմբագրութեանս հասցէին:

ԱԶԴ

Իրաւունք կը ծախուի Սասուն սրճարանի ծխալաճառ Պ. Վահան Անտօնեանի, Մուսալազուրու գահ. վէճի Պ. Յակոբ Կէօղիպէօլիւք Բանի և Ապտիլըրահման միկիլիին դէմ Հայկական Գրատան ըմլ ի վառնա:

ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՓԱՂԱՓԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ներկայ 1897 թվականի
Պոչտային համար 50 ֆրանկ
» » վեցամսեայ 5 »
Արտասահմանի » 12 »
» » վեցամսեայ 6 »
ԿԱՆԽԻՆ ՎՃԱՐՆԵԼԻ

Համակ դրամ եռայնի դրկել հետնեւայ հասցեով
ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ ԻՐԱՎՈՒՆԿ ԼՐԱԳՐՈՑ ՎԱՌԱ (ՊՈՒԼԿԱՐԻԱ)
Редакция на вѣстникъ Редаction du journal
„Иравункъ“ „Iravounek“
ВАРНА (България). VARNA (Bulgarie)

Խմբագրութեան ուղղակի գրութիւնք
էս չեն որոշիր եւ յարմար դասուած-
ները միայն կը հրատարակուին անպո-
ղովի կամ մասամբ:
Խմբագրութեան տնային 20 ամսեայ տե-
րեւէն աւելի անգամներու համար 20 0/0
զեղչ կը լինի:

ԹՈՒՐԲԻ Ի ՀԱՅԱՍՏԱՆ

Ա.

Եթէ իմաստասէրի աչքով դի-
տենք մեր հանրային կեանքի դա-
նազան հրեւոյթները, որոնք յա-
ճախ իրարու հետ անկուպ և մին-
չեւ իսկ հակասական կերեւին,
տեսակ մը զարմանք կը պաշարէ
մեր միտքը:

Ժողովուրդ մը որուն մտացիու-
թիւնը, ամէն կերպ զարգանալու
ընդունակութիւնները առածիկարգ
անցած են, որ իր գոյութեան
պայմանները կազմող բարոյական
այնքան զօրաւոր ուժեր ժառանգեր
է իր պապերէն քառասուն քարե-
րէ ի վեր, ինչու համար դատա-
պարտուած ըլլայ դարերով կրելու
թուրքին լուծը, ստրուկն ըլլալու
պետութեան մը, որուն բոլոր ա-
ռաւելութիւնը նիւթական կոշտ
ուժի մը մէջ կայացած է:

Բոլորովին նիւթապաշտ ըլլանք
բառին ամէնէն յոռի իմաս-
տով և ընդունինք պաղտապէս թէ
այս աշխարհի մէջ միշտ իրաւուն-
քը զօրաւորագունին եղած է և
միշտ պիտի ըլլայ անպայման:
Բայց մարդկային ցեղին պատմու-
թիւնը չհաստատուիր այդպիսի տե-
սութիւն մը: Իրաւ է որ սուրն ու
սուրնը մեծ դեր խաղացած են
ազգերու կեանքին մէջ և վճա-
կան ազդեցութիւն ունեցեր են ա-
նոնց ճակատագրին վրայ, սակայն
սուրին վախը միայն, ինքնին եր-
բէք բաւական եղած չէ մշտնջե-
նապէս զապելու մտաւոր և բարո-
յական առաւելութիւններով օժ-
տուած ժողովուրդ մը, որքան ալ
վերջինը տկար ըլլայ նիւթապէս:
Շատ բնական է այս: Ուր բա-
րոյական արժանիք կայ, մտային
ընդունակութիւններ կան, հոն ա-
նոնց շնորհիւ կը ստեղծուին նաեւ
հարկաւոր նիւթական ուժերը,
երբ ասոնք հանգամանքներու բեր-
մունքով թուլցած են, կամ ազգի
մը նորանոր պէտքերուն և պա-
հանջներուն համար անբաւական
դարձեր են:

Ուրիշ խօսքով, ժողովուրդ մը
տար տարրի մը տեսական տիրա-

պետութեան ներքեւ կրնայ ընկ-
նուիլ, նոյնիսկ անոր հետ ձուլուիլ
միայն այն ատեն՝ երբ տիրող տար-
րը ոչ միայն նիւթապէս այլ և
բարոյապէս գերակայ հանգիստ-
ցիր է նուաճուածին հանդէպ:

Հայաստան այս տեսակէտով իր
արտակարգ և բացառիկ երեւոյթ
մը կը ներկայանայ մեզ: Գուցէ
մեր հայրենիքը պատմութեան մէջ
անզուգական օրինակ մըն է, ո-
րուն վրայ կը տեսնենք թէ կրնայ
միմիայն թուրի և ճոկանի վրայ
հաստատուած բռնապետութիւն
մը հինգ հարիւր տարի ստրկու-
թեան շղթաներու մէջ պինդ կաշ-
կանդուած պահել ժողովուրդ մը
որ բարոյապէս միշտ այնքան բար-
ձր երեւցած է զինք ճշող բար-
բարս տարրէն:

Ազգերու կեանքը սահմանող
պատմական-բարոյական օրէնքները
բացառութիւն մը ըրին արդեօք
երբ կարգը հայ ազգին եկաւ և
այդպէս զայն յաւիտենական ան-
բախտութեան մը մատնեցին: Գրե-
թէ այս նշանակութիւնը ունի ա-
մէնուս շրթերուն վրայ իր բա-
ցարձակ ճշմարտութիւն յեղյե-
ղուող սա խօսքը. «մենք դժբախտ
ազգ մ'ենք»:

Այս ըմբռնումը որքան սխալ
այնքան ալ փաստակար է: Տիե-
զերքը վարող օրէնքները նոյնն են
ամենուրեք և ամէնուն համար:
Որքան զիտութիւններ կը յա-
ռաջանան, այնքան կը պարզուի
սա ճշմարտութիւնը թէ մեզ ան-
ծանօթ բնական օրէնքներու ար-
դիւնք է, ինչ որ բացառութիւն
կամ դիպուած կերեւի մեզ բնու-
թեան մէջ:

Պէտք չէ ուրեմն փնտրել դիպ-
ուածի կամ հայուն չարաբախտու-
թեան վերագրել թուրքին տիրա-
պետութիւնը Հայաստանի վրայ,
ինչ որ կրնայ սա աղետալի հե-
տեանքն ունենալ որ ժողովրդին
միտքն ու կամքը կը կաշկանդէ,
որովհետեւ ան անկարելի ու անօ-
գուտ կը նկատէ բախտին անյեղի
տնօրինութիւններուն դէմ մաքա-
ռիլ:

Պէտք է ուրիշ տեղ որոնել մեզ
զբաղեցնող այս պատմական երե-

ւոյթին պատճառները:

Իրօք լոկ բիրտ ուժն է որ
Հայաստանի մէջ հինգդարեան
յաղթանակ մը կը վայելէ բարոյա-
կան անապական ու անվիճելի ու-
ժերու վրայ: Բարոյականը բա-
ցարձակապէս կը պակսի՝ և միշտ
պակաս՝ է արդեօք մեր բռնաու-
րին, և միւս կողմէն՝ այն առաւե-
լութիւնները և առաքելութիւն-
ները, որոյմով կը պարծինք և
թուրքէն գերիվեր կը գասնեք
ինքզինքնիս՝ չե՞ն բաղխեր զիրենք
զոնէ մասամբ հակադէմոկրատիա և մեր
բարեբերուն մէջ արմատացած չար-
աղէտ ուժերու:

ԻՅՈՒՐ ՏԷ ԶԷՓՈՒ ՏՕՈՒՆԸ

Երկու ամիսն անգամ մը այս
անունով գրքոյի մը կը հրատա-
րակուի հայր Շարմիստի հսկո-
ղութեան ներքեւ ի Բարիդ: Ըն-
դարձակ համարատուութիւն մըն
է Արեւելի մէջ (գլխաւորապէս
Տաճկաստան ու Պարսկաստան) կա-
թոլիկ միսիոնարութեան գործու-
նէութեանը հաւատքի ու փրանս-
կրթութեան տարածումի մասին:

Արդէն լոյս ելած է նոյեմբեր-
դեկտեմբերի գրքոյից, որ մեծ
մասամբ զբաւուած է նկարագրու-
թեամբ քրիստոնէից վիճակին
Հայաստանի մէջ: Ահ ու սարսափ
աղբող յայտնութիւններ կան:
Գրքոյի սկիզբը դրուած է Սուլ-
թանի առաջին բարտաղար թահ-
սին պէյի հետեւեալ շրջաբերական
հեռագիրն ուղղուած նահանգնե-
րու կուսակալներուն:

«Հաւեցաւ թէ հրամաններ տըր-
ւած են հիւպատոսներուն քըն-
նութիւն կատարելու ի մասին
հայերու թիւին Սնատուրի մէջ,
անոնց թշուառութեան մատնուած
զաւկներուն, անոնց որ իսլամա-
ցան, իսլամներու տուններու մէջ
պահուած կ'ընտան, հայ ընտա-
նիքներու աղքատութեան և ա-
նոնց որ դատապարտուեցան: Արդ,
որովհետեւ յայտնուած է թէ հա-
յերն իրենք կազմակերպած ու ա-
ռաջ բերած են խռովութիւնները,
և թէ իրենց նախադրականը

նախատեսուած չէր, անհերքելի
է որ իսլամ կ'ընեն և աղաք մնա-
ցած են անոնց ձեռքը: միւս կող-
մէ, նոյնքան ստոյգ է նաեւ որ հայ
կ'ընեն ու աղաք չեն ինկած իս-
լամներուն ձեռքը:

«Այսու հանգերձ միշտ ջանք
կ'ըլլայ անդադար քննութիւններ
կատարելու՝ հայերն իբրեւ զոհ
ցոյց տալէ նպատակով, և զի այս
փորձեր փաստակար են կայս. կա-
ռավարութեան, ուստի իմանալ-
նուդ պէս հիւպատոսներուն այդ
գործը, ջնջելու համար անոնց
ստույթեանց ու զրպարտութիւննե-
րուն ազդեցութիւնը, որ կրնայ
մեծապէս փնտսել կառավարու-
թեան, պարտիք իսկոյն անհրա-
ժեշտ միջոցները ձեռք առնել զա-
նոնք արգելելու և միանգամայն
մեզ իմաց տալ որպէս կը պահան-
ջէ անձնուիրութեան ու հաւա-
տարմութեան պարտքը:

«Եթէ այլապէս վարուիք, պա-
տասխանատու պիտի մնաք և իբ-
րեւ դաւաճան նկատուիք կառավա-
րութեան և իսլամութեան:

«Նոյնպէս անհրաժեշտ է որակ-
ներեւցոյց տաք հայերուն աւերումի
և նախադրական արարքները
որոնք առաջ պիտի գան հիւպա-
տոսներուն քննութեանց ու դատա-
վարութիւններէն:

«Ուրեմն Սուլթանին հրամանով
է որ պալատան Ա. քարտուղարը
իր 1313 սեպտեմբերի հեռագրով
ձեզ կ'իմացնէ ամէն հարկաւոր
խնամք այս եղանակով տանելու
պարտքը. հետեւապէս, ըստ կայս.
իրատէի, այս նպատակով դուք
պարտաւոր էք գործադրել ամէն
անհրաժեշտ փութկոտութիւն և
միջոցներ»:

Սոյն պաշտօնագրէն կը հետեւի
որ հայերը ջարդած են խեղճ
թուրքերը ու զանոնք կողոպտած:
Աս էր պակաս: Բայց շատ չգար-
մանանք այս անյուր ստույթեան
վրայ որ մեր ամէնէն ռիսկերիմ թըշ-
նամիւն կողմէ կուգայ. հապա ի՞նչ
ըսել պատ. Հիփոթի պէս քրիս-
տոնեաներու որոնք ամէն բան
տեսնելէ ու ճշմարտութեան թա-
փանցելէ յետոյ՝ չեն ամչնար հաս-
տատելու թուրքին ամօթալից
ստույթիւնները: